# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԳՈՌԱ ՍՊԸ-Ն ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/09 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 32 | - | - | - | - | "Զգեստապահարանը պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի ողորկ, առանց ծլեպների և արտադրական խոտանների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները պետք է լինեն հարթ և անվտանգ, անհրաժեշտության դեպքում՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներով: Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի հարմարավետ ըստ նպատակային նշանակության շահագործման ժամանակ: Զգեստապահարանն ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պետք է պատրաստված լինի լամինացված 18 մմ հաստությամբ E0դասի ФSU-ից արտաքին չափսերը՝820 x 450 x 2000 մմ (Լ x Խ x Բ):Զգեստապահարանը վերևից ունի 400 մմ բարձրությամբ 1 դարակաշար, որից 60 մմ հեռավորությամբ տակից ամարցվում է ¾ դյույմ քրոմապատ, մետաղական երկաթյա ամուր և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | որակյալ ձող՝ համապատասխան ամրացումներով: Զգեստապահարանն ունի 2 իրար հավասար դուռ, դռները՝ լամինացված 18 մմ հաստությամբ E0դասի ՓՏՍ-ից: Դռներից յուրաքանչյուրը ամրացվում է 3-ական ծխնիով: Դռները պետք է ունենան մետաղական օվալաձև բռնակներ: Աշխատանքային հարթության եզրերը շրջափակվեն 1-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC կամ համարժեք), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC կամ համարժեք): Աշխատանքային հարթությունը պետք է լինի անփայլ: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Հետնապատը պետք է լինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթեփային սալից(ԴՎՊ) և նույն E0դասի ՓՏՍ-ի գույնի: Պահարանը ամբողջ պարագծով պետք է ունենա շրջանակաձև ոտքեր, որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ՝ 8 մմ հաստությամբ։ Ոտքերըբ պետք է լինեն կարգավորվող։ Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 800 x420 x 100 մմ (L x Խ x Բ), որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8 մմ է։ Նմուշները պետք է մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն)։ Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա պետք է կատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը պետք է կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես` անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ` տեխնիկական անձնագրում): " |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ГОРА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/09 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 32 | | | | | |
| | | | | | |